

**ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ՄՈՐԻԱ, ՍԱԳԵՄ, ՀԵՔՈՒՍ, ԵՐՈՒՍԱԳԵՄ, ՍԻՈՆ
SPECIAL TOPIC: MORIAH, SALEM, JEBUS, JERUSALEM, ZION**

Այս տերմինը (Մորիա, BDB 599, KB 635), շատ տարբեր կերպերով է թարգմանվել՝

1. Վուլգատտան և Սամարացիների Հնգամատյանը տալիս է «տեսիլքներ»
2. Թարգումը թարգմանում է այն որպես «երկրագոյություն»
3. Սեպտուագինտան տալիս է «բարձր»
4. Փեշիտտան՝ «Ամոննացիների»
5. որոշ գիտնականներ թարգմանում են այն որպես «ցույց տրված ՅԱՀՎԵԻ մասին»
6. մյուսները՝ «ընտրյալը»
7. մինչդեռ ուրիշներն էլ՝ «հայտնվելու վայրը»

Կարծես թե «հայտնվելու վայրը» հավանական լավագույն թարգմանությունն է՝ հիմնված 2 Մնաց. 3:1-ում այս տերմինի մյուս կիրառության վրա, որը նշում է, որ տաճարը կառուցվեց Մորիա լեռան վրա, մի վայր, որտեղ Աստված հայտնվեց Դավիթին: Սա կարող է կա՛մ նկատի ունենալ 2 Թագ. 24:16, կա՛մ էլ հավանաբար 1 Մնաց. 21:18-30: Այս համատեքստում Աբրահամը Իսահակին գոհ մատուցելը կա՛մ բաց է թողնված, քանի որ այն այնքան հայտնի պատմություն էր, կա՛մ էլ այն հայտնի չէր 1 Մնացորդացի հեղինակին: Նաև Մորիա լեռը կարծես թե կապ ունի Մելքիսեդեկի քաղաքի՝ Սաղեմի հետ (Ծննդ. 14:18), որը հետագայում կոչվեց Հեբրուս, որն էլ դարձավ Երուսաղեմ:

1. «Մորիա» լեռը կապված է Աբրահամի ժառանգ Իսահակի հետ Ծննդ. 22:2-ում, որը հետագայում դարձավ տաճարի տեղանքը (տես՝ 2 Մնաց. 3:1):
2. «Սաղեմ» (BDB 1024 II, KB 1539, տես՝ Ծննդ. 14:18, Սաղմ. 76:2, Եբր. 7:1,2)՝ Մելքիսեդեկի քանանական մի քաղաքի տեղանք:
3. Հետագայում այն դարձավ քանանացիների «Հեբրուս» քաղաքը (BDB 101, KB 382, «հեբրուսացիներ» բառից, տես՝ Ծննդ. 10:16, 15:21, Ելից 3:8, 17, Հեսու 18:16, 18, Դատ. 19:10-11), որը Դավիթը գրավեց (տես՝ 1 Մնաց. 11:4-5):
4. Այս անունը փոխվեց դարձավ «Երուսաղեմ» (BDB 436, KB 437), հավանաբար Դավթի կողմից քաղաքի գրավումից հետո: Դժվար է համոզված պատասխան տալ այստեղ, քանի որ այս անունը օգտագործվում է Հեսու 10, 12, 15-ում: «Երուսաղեմ» անունն ունի անհայտ ստուգաբանություն. հավանաբար նշանակում է «խաղաղության կալվածք» կամ «խաղաղության հիմք»:
5. Հանախ այս մայրաքաղաքը անվանվում է «Սիոն» (BDB 851, KB 816), որը այն յոթ բլուրներից մեկի անունն է, որոնց վրա կառուցված է Երուսաղեմ քաղաքը: Այս անունը հանախ կիրառվում է Սաղմոսներում և Եսայի մարգարեության գրքում: Այն դարձավ հրեա ժողովրդին նկատի ունենալու կերպ:

Այս տերմինը նշանակությունը անհայտ է, սակայն առկա են հետևյալ տարբերակները (AB, հատոր 6, էջ՝ 1096):

- ա. Եբրայերեն արմատ – «ժայթքել»
- բ. Եբրայերեն արմատ – «չորանալ»
- գ. Քռեցիների արմատ – «առվակ», «վտակ», «վաղի»
- դ. Արաբերեն արմատ – «բլրի գագաթ», «կատար»
- ե. Եբրայերեն «վահան» բառից ենթադրական արմատ – «ամրոց»: